**ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**
**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՕԳՏԻՆ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄՆԵՐԻ ԲԱԺԻՆ**

N Եսե 1768/11
05/10/2022թ.

**0078, Երևան, Հալաբյան 41/ա**
**Հեռ. /060/ 713-488**

Ավետիս Դանիելյանին
/ք. Երևան, Գ. Հակոբյանց փող. 16 տուն/

Հարգելի պարոն Դանիելյան,

ՀՀ արդարադատության նախարարին հասցեագրված՝ «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործունեության վերաբերյալ» Ձեր 29.09.2022թ. գրությանը հայտնում ենք, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Երևան քաղաքի պետական բյուջեի օգտին բռնագանձումների բաժնում Ձեր վերաբերյալ հարուցված թիվ 02504561 կատարողական վարույթով իրականացված կատարողական գործողությունների արդյունքում՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 10. 11.2016թ. թիվ 11-8/11-8/33642-16 գրությամբ խնդրել է Ծառայություն կատարման ներկայացրած թիվ ՎԴ/0051/05/16 կատարողական թերթը վերադարձնել:

Արդյունքում՝ թիվ 02504561 կատարողական վարույթով կիրառված բոլոր արգելանքներն ու սահմանափակումները վերացվել են և 15.11.2016թ. թիվ 02504561 կատարողական վարույթը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով **(Հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե՝ պահանջատերը դիմում է ներկայացրել կատարողական թերթը, բացառությամբ հայցի ապահովման հիման վրա տրված կատարողական թերթի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի, ինչպես նաև այլ օրենքների հիման վրա ներկայացված կատարման վերաբերյալ գրությունը, քանդման մասին վարչական ակտի կատարման վերաբերյալ գրությունը, կատարողական մակագրության թերթը կամ գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատախազի որոշումը կատարելու վերաբերյալ դիմումը վերադարձնելու մասին)** ավարտվել է:

**Հարգանքով՝**
**Բաժնի պետ,**
**Արդարադատության գնդապետ** **Միեր Խուրշուդյան**

Կատարող՝ Արման Սարգսյան
Երևան քաղաքի Պետական բյուջեի օգտին
բռնագանձումների բաժնի պետի տեղակալ